



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԿՈԴ
050.0049 Ն. 18.04.23**

18 ապրիլի 2023 թվականի թիվ 49-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2023 թվականի առաջին եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1% չափով՝ 2023 թվականի մայիսի 1-ից և 1.5%-ի չափով՝ 2023 թվականի օգոստոսի 1-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

X

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
Երևան**

Մ. Գալստյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2023թ. առաջին եռամսյակ)

2023 թվականի ապրիլի 18-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ 1.5% մակարդակում¹:

Հակացիկլիկ շեմի սահմանված դրույքաչափը ուժի մեջ է 2023 թվականի օգոստոսի 1-ից²:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրո-ֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Ֆինանսական ցիկլի ինդեքսը նախորդ եռամսյակի համեմատ գրեթե չի փոփոխվել: Ֆինանսական ցիկլի վերջին տարիների աճերը հիմնականում պայմանավորվել են հիպոտեկային և անշարժ գույքի շուկայի զարգացումներով: 2023թ. 1-ին եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ վարկավորման բոլոր ուղղություններով արձանագրվել է չափավոր ակտիվություն: Բացառություն է հանդիսանում հիպոտեկային վարկերի ոլորտը, որտեղ պահպանվել են աճի բարձր տեմպերը և ռիսկերի կուտակման միտումները: Ոլորտային վարկավորման մյուս ուղղություններով ֆինանսական համակարգում ցիկլային համակարգային ռիսկերը ընդհանուր առմամբ շարունակում են գտնվել հավասարակշռված մակարդակում (ո՛չ թերագնահատված են, և ո՛չ էլ գերագնահատված): 2023թ. առաջին եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը³ ևս զգալի փոփոխություններ չի կրել և կազմել է շուրջ 64%: Վերջինս շարունակում է պահպանվել իր երկարաժամկետ տրենդից (վարկեր/ՀՆԱ ճեղքվածք) ցածր մակարդակում (մոտ -9 տոկոսային կետ): Նշված զարգացումները հիմնականում պայմանավորված են վարկերի աճի համեմատ ՀՆԱ առաջանցիկ աճով:
2. Հիպոտեկային վարկավորման պաշարային ցուցանիշի աճը պահպանվել է բարձր մակարդակում, ինչը ուղեկցվել է անշարժ գույքի շուկայում գների բարձր աճով: Համաձայն ՀՀ ԿԲ հաշվարկների՝ անշարժ գույքի գների շեղումը հիմնարարներով

¹ Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿԲ)): Կենտրոնական բանկը ԿԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով

² 2023թ. մայիսի 1-ից մինչև 2023թ. հուլիսի 31-ը բանկերը պետք է բավարարեն ԿԲ 1% դրույքաչափի պահանջը՝ համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 179 Ն որոշման: 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ բանկերը պետք է բավարարեն ԿԲ 1.5% դրույքաչափի պահանջը՝ համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 6 Ն որոշման:

³ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2023թ. առաջին եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

պայմանավորված գնից նախորդ եռամսյակի համեմատ միջինում աճել է 5 տոկոսային կետով և անշարժ գույքի գների գերաժևորման չափը գնահատվում է շուրջ 25%: Հաշվի առնելով, որ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով պարտքային ֆինանսավորման ծավալների և անշարժ գույքի գների աճերը համարվում են բնույթով միմյանց փոխսնուցող՝ ԿԲ-ը գնահատում է, որ անշարժ գույքի շուկայում պահպանվում են գերտաքացման ռիսկեր:

3. Աշխարհաքաղաքական միջավայրի անորոշությունները և դրանցից ածանցվող ցիկլային համակարգային ռիսկի նյութականացման հավանականությունը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում: Համաձայն ՀՀ ԿԲ գնահատականների, ցիկլային ռիսկերի նյութականացման արդյունքում առաջացող հավելյալ անսպասելի կորուստների մեծության գնահատականը նախորդ եռամսյակի համեմատությամբ զգալի փոփոխություններ չի կրել:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում, Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում անփոփոխ թողնել ԿՀԲ դրույքաչափը՝ պահպանելով այն 1.5% մակարդակում: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաճանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից: